




“ԹՈՂ ՏՈՒՒՔ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ” ԴՈՒԿ. ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ Զ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ. ՕԳՈՍՏՈՍ 1. 1877.

ԹԻՒ 8.



ՋՈՒԿԸ ՍԱՆԴՈՒՂՆԵՐԷՆ ՎԵՐ ԿԵԼԷ

ՉՈՒԿԻ ՄԸ ՍԱՆԿՈՒՂՆ ՐԷՆ ՎԵՐ ՀԱՆՈՒԻԸ

Պատկերին մէջ ցուցուած խոշոր շանաձուկն, եթէ իր կաւքին թուղուէր, բնաւ պիտի չեղլէր Լոնտոնի թանգարանին սանդուղիներէն վեր: Եթէ այս ձուկը ջրոյ մէջ եղած ըլլար, անոր շուրջն աշխատող մարդիկ այնպէս հանդարտ և անվախ պիտի չկենային ինչպէս կը տեսնուին պատկերին մէջ:

Որովհետեւ ձուկը ոտք չունի, կ'երեւի թէ մարդիկ կեղծ ոտքեր շինած են այն ձկան, և քանի որ ձուկն իր կեղծ ոտքերուն վրայ կանգնած է, մարդիկ զանի չուանով սանդուղիներէն վեր հանելով պիտի դնեն այն անցը որ թանգարանին մէջ անոր համար պատրաստուած է:

Այս շանաձուկը մինչեւ ցարդ բռնուած և ի տես հանուած շանաձկանց ամենէն մեծն է: Շանաձուկն որսալ շատ դժուար է, և այս պատճառաւ շատ քիչեր որսացուած են ցարդ: Այս ձկան երկայնութիւնն իբր 11 կանգուն է, և մորթը միայն 1,000 քաշ կը կշռէ:


Այս տեսակ շանաձուկն Ատլանտեան ովկիանոսին հիւսիսային կողմերը կը գտնուի, և երբեմն Եւրոպոյ ծովքերաց կը մտնենայ: Այս ձուկը ծովուն երեսին մօտ գտնուած մանր ձուկերով կ'ապրի, ձուկ փնտռելու համար երբեմն այնչափ կը մօտենայ ջրոյ երեսին, որ անոր կռնակի մեծ թեւը ջուրէն վեր նսուու առագաստի նման կ'երեւի: Այս պատճառաւ Եւրոպայի մէջ ձկնորսներն այս ձուկն «առագաստուոր ձուկ» կը կոչեն:

Ընդհանրապէս շանաձուկը մեծ երեքտանեաւ կ'որսացուի, բայց երեք տանին անոր մարմնոյն մէջ մտնելէն ետքն ալ ձուկն իբր ժամ մը կ'աշխատի ազատելու, և իր զորաւոր ագլուփներեմն մերձակայ նաւակներուն զարնելով զանոնք կ'ընկղմէ:

ԱՐԵՎ ՔԱՂԱՔ

Արեգ քաղաքը ժամանակաւ իր շքեղութեան և ուսումնական հաստատութեանցը կողմանէ նշանաւոր էր:

Հեղիուպոլիս քաղքին աւերակներն Արեգ քաղքին դիրքը կը ցուցնեն: Այս քաղաքը Սուրբ գրոց մէջ քանի մը տեղ յիշուած է, երբեմն Բեթսամիւս և երբեմն Արեգ քաղաք անուամբ: Յունարէն Հեղիուպոլիս, եբրայ յեցերէն Բեթսամիւս և Հայերէն Ա-



ԱՐԵՎ ՔԱՂԱՔԻՆ ԿՈՐԹՈՂ

րեգ քաղաք, երեքն ալ կը նշանակեն «Քաղաք արեւու», Յիշեալ քաղաքին այս անունը տրուած է թերեւս սապատճառաւ որ շքեղ և զեղեցիկ քաղաք էր, և կամ վանդի անոր մէջ քուրմերը տեսակ մը պաշտօն կը մատուցանէին արեգական:

Հոյակապ և հուշակաւոր վարժարան մը կար այն կուստան շուրջը որուն մէջ Յովսեփայ աները Պետափրէս քրմութիւն կ'ընէր: Հերոդոտոս իր պատմութեան մէջ մտար հոն գրեց: Պալատն փրիլիսոփայութիւն սորվելու համար իր կենաց մէկ մասն այն վարժարանին մէջ անցուց:

Կամփրիս երբ զեգիպտոս նուաճեց, կործանեց այս քաղաքը: Հազար ութ հարիւր տարիէ հետէ քանի մը աւերակներ միայն մնացած են այն քաղքին հին և հոյակապ շէնքերէն, Պոլսոյ Աթ մէյտանը կոչուած հրապարակին մէջ անկուած կոթողն Արեգ քաղաքէն բերուած է: Այն քաղքին աւերակաց մէջ մնացած է ուրիշ կոթող մը որ իբր երեսուն կանգուն երկայն միակտուր քար է: Յորենի արտերուն մէջէն մանուածապատ ճամբով յիշեալ կոթողին քով կ'երթուի: Ինչպէս Աթ մէյտանի կոթողին նոյնպէս և այս կոթողին չորս կողմը պատկերներով գիրեր գրուած են, և այն պատկերներուն մէջ կը տեսնուի խաչի նշանը: Կոթողին մէկ կողմը վերէն վար իշամեղուներու բոյներ կախուած ըլլալով, այն նշանագրերը գրեթէ ծածկած են:

Արեգ քաղաքին աւերակաց մէջ և Աթ մէյտանի կոչուած հրապարակը գտնուած կոթողներուն վրայ սաչափ տեղեկութիւն միայն ունինք թէ այն քարերը Յովսեփայ ծննդեանէն առաջ կանգնուած էին հոն, և Պետափրէս ամէն օր երբ քրմութեան

պաշտօն կատարելու կ'երթար, այն կոթողներուն քովէն կ'անցնէր:

Ինչ որ Յովսեփայ կ'ընէ Ասանէթ իր հարսանեաց հետեւալ առաւօտ տեսաւ, նոյնը մենք կը տեսնենք վերի պատկերին մէջ:

ՊՈՊ

Պոպ Ամերիկայի քաղաքներէն մէկուն մէջ փողոցները կը պտտուր գաւառիկ փողոցները պտտող տղոց շատերուն պէս Պոպ ալ կարգալ գրել սորված, և կրթուած չէր: Կիրակնօրեայ դպրոցաց վարժապետները շատ ջանացին իրենց դպրոցները տանել զՊոպ, և Պոպ հաճեցաւ ժամանակ մը երթալ այն դպրոցներէն մին, բայց կը կարծէր թէ դպրոց երթալուն օգուտը վարժապետներէն գիրք կամ պատկեր ընծայ առնել էր և ոչ ուրիշ բան: Այսպէս Պոպ բան սորվելու նպատակաւ շերթալուն համար դպրոց, բան մը չէր սորվեր: Ինչպէս կ'երեւի, Պոպ կը կարծէր նաեւ թէ կիրակնօրեայ դպրոց երթալով մեծ շնորհք մը կ'ընէր վարժապետին, վասն զի անկէ վարձ կըսպասէր, ուստի և տեսնելով որ վարժապետը պարգեւ չէր տար անոր ամէն կիրակի, դպրոց երթալը դադարեցուց:

Օր մը տիկին մը Պոպի տունը եկաւ, և անոր անկիրթ և տղէտ մեծնայուն վրայ ցաւ յայտնելով ինդրեց անոր ճօրմէն զՊոպ իր դպրոցը ղըրկել: «Եթէ տղաս կ'ուզէ դպրոց երթալ, թող երթայ», ըսաւ Պոպի մայրը յիշեալ տիկնոջը որ Միս կողքս կը կոչուէր: Միս կողքս հարցուց Պոպին. «Կիրակնօրեայ դպրոց կու գաս»:

Պոպ ըսաւ. «Կու գամ, բայց ինձի ի՞նչ կու տաս»:

«Բան մը չեմ տար», ըսաւ Միս կողքս:

«Բայց, եթէ ես դպրոց գամ», ըսաւ Պոպ, «Լարին ալ կրնամ բերել. ուստի քեզի երկու աշակերտ բերած կ'ըլլամ: Արդ երկու աշակերտ մէկէն բերելուս համար ինձի ի՞նչ կու տաս»:

Միս կողքս ըսաւ. «Չեզի կարգալ կը սորվեցնեմ և կրթութիւն կու տամ. քան զայս աւելի ի՞նչ կ'ուզէք»: «Կրթութիւն», ըսաւ Պոպ ինդալով, որպէս թէ ծագրելի բան մը ըսած էր Միս կողքս, «որո՞ւ փոյթ է ուսում և կրթութիւն»:

Միս կողքս դարձեալ հարցուց .
«Վերջապէս դպրոց պիտի գամն» :

Պոպ ըսաւ . «Ոչ պիտի չգամ դըպրոցը ի՞նչ բան ունիմ» :

Բայց քիչ մը ետքը Պոպ միտքը փոխելով ըսաւ . «Շատ աղէկ, որովհետեւ այսչափ կը փափաքես իմ դպրոց գալուս, կու գամ : Անտարակոյս ինչ որ արժան է կ'ընես ինծի համար» :

Միս կողքս կիրակի օրը եկեղեցի երթեալով տեսաւ որ Պոպ և անոր բարեկամը Լարի կիրակնօրեայ դպրոցին գրան առջիւր կը սպասէին :

Պոպ դպրոց երթալէն առաջ Լարիի հետ տեսնուելով անոր ըսաւ , «Լարի, եկու այսօր քեզի հետ կիրակնօրեայ դպրոց երթանք, հօտին գառնուկները պիտի ըլլանք» :

Լարի ինդ ալով հարցուց . «Կիրակնօրեայ դպրոցին մէջ ի՞նչ պիտի ընես» :

Պոպ ըսաւ . «Վարժուհին պիտի լալնեմ, և անոր արտասուքը գլխարկիս մէջ լեցնելով քաշը հարկուր փարայի պիտի ծախեմ» :

Լարի իր ընկերոջը խօսքին վրայ ինդ ալէն ետքը ըսաւ . «Եթէ կիրակնօրեայ դպրոցին մէջ չարութիւն ընես, ոստիկանութեան կը մատնուիս» :

Պոպ ըսաւ . «Ոչ, ոստիկանութեան չեմ մատնուիր, կիրակնօրեայ դպրոցի մէջ պատիժ կամ սպառնալիք չկայ : Մենք հօտին գառնուկներն ենք, հոն քաղցրութեամբ կը խօսուի մեզի հետ . և որչափ շատ շարութիւն ընենք, այնչափ աւելի կը սիրուինք : Ես արդէն փորձած եմ, և լաւ գիտեմ այս բաները» :

Լարի չէր հաւատար Պոպի խօսքերուն, բայց Պոպ ըսաւ անոր . «Դուն բան մը մի ընե, միայն դիտէ թէ ես ինչ կ'ընեմ» : Այս ըսելով սկսաւ Լարիի մագերը քաշել . այնպէս որ Լարի սկսաւ գոչել . «Ո՛հ մի ընե, մի ընե» : Պոպ ըսաւ . «Ո՛հ այսպէս կ'ընեմ այն մարդուն որ ինծի ձեռք կ'երկնցնէ . ուրեմն դպրոց երթանք» :

Արդ Պոպ և Լարի որ, ինչպէս ըսինք, արդէն կիրակնօրեայ դպրոցին գրան առջիւր կը գտնուէին, Միս կողքսի հետ ներս մտան և նստան այն տեղ որ անոնց ցուցուեցաւ :

Երբ ուրիշ տղայք սկսան գալ, Պոպ անոնցմէ ոմանց ոտքին դպչելով զանոնք գետին կը ձգէր, և այլոց մազերը կը քաշէր : Դասի ատեն ծանր ծանր հարցմանց ծաղրելի պատասխաններ կու տար : Միս կողքս գտնուելու կը համբերէր Պոպի լրբութեանը,

բայց չէր ուզեր խտուութեամբ վարուել անոր հետ, յուսալով թէ վերջապէս կ'ընար քաղցրութեամբ յաղթել անոր . նաև վստահ էր որ, եթէ Պոպի սրտին ազդելու միջոցը գտնէր, Պոպ ինքնին պիտի ուղղուէր : Այս պատճառաւ առանձին իր քովը կանչելով զՊոպ, երկար ատեն անոր հետ խօսեցաւ, և շատ խրատներ տուաւ, և տեսնելով որ Պոպ ու շարութեամբ մտիկ կ'ընէր խրատները, հասկցաւ որ իր խօսքերն ազդեցութիւն ըրած էին անոր :

(Պոթ շարունակով)

ՊԱՏԿԵՐԻ ԴԻՐՔ

Օր մը կարապետ ըսաւ իր քրոջը . «Երէկ տիկին մը պատկերներ գործածելու շատ աղէկ կերպ մը սորվեցուց մերս, եթէ մենք ալ այն կերպը գործածենք, բաւական օգուտ կը քաղենք : Պատկերները փակցնելով գիրքի մը մէջ որ անգիր թուղթէ է՝ այն պատկերներուն յարմար մէյմէկ խօսք գտնենք Սուրբ գիրքէն, և պատկերներուն տակը կամ քովը գրենք» : Մարիամ ձեռքի գիրքը մէկգի դնելով, «Շատ աղէկ», ըսաւ, «այնպէս ընենք . աղէ՛, սկսինք» :

Կարապետ սկսաւ այնպիսի գիրք մը փնտռել, երկու քոյրերն ալ, Մարիամ և Աննիձա, վաղելով վար գացին սպասուհւոյն աղաչելու որ պատկերները փակցնելու համար քիչ մը խմոր պատրաստէ :

Սպասուհին հոն չէր : Աննիձա և Մարիամ կարծելով թէ դիւրին էր խմոր շինել, ուղեցին անձամբ պատրաստել խմորը :

Նախ ապուրի գոլ մը լեցուն ալիւր առին : Մարիամ Աննիձային հարցուց . «Խմորը գաւաթի մէջ պատրաստենք թէ պնակի մէջ» : «Գաւաթի մէջ պատրաստենք» ըսաւ Աննիձա :

Արդարեւ շատ խմոր պէտք պիտի ըլլայ մեզի, բայց լաւագոյն է միշտ նորէն նորէն պատրաստել, վասն զի խմորը երկար ատեն մնալով կը կարի : Կը

լիչէն, անգամ մը Սոփիին խմորը սենեկին մէջ երկար ատեն մնալով կտրեցաւ :


Մարիամ հաճեցաւ Աննիձայի խօսքին և ըսաւ . «Շատ աղէկ, գաւաթի մէջ պատրաստենք : Դուն քիչ մը ջուր բեր» :

Աննիձը որ վարժ չէն խմոր պատրաստելու, չէն գիտեր թէ ինչպէս լեցնելու էն ջուրը, որ ալիւրը ջուրին մէջ փոթ փոթ չմնայ, այլ հաւասարի :

Աննիձա քիչ ջուր լեցուց, բայց այն քիչն ալ այնչափ էր, որ ալիւրը չհաւասարեցաւ : Դարձեալ ալիւր գրին, անատեն ալ դգալը խմորին փակաւ մնաց : Երկրորդ անգամ ջուր լեցուցին, և դարձեալ չյաջողեցան : «Այս խմորը թափենք», ըսաւ Մարիամ, «և ուրիշ խմոր պատրաստենք» : Բայց Աննիձա մօրը սովորական մէկ խօսքը լիչելով ըսաւ . «Աղէկ նիւթ մը չկորսնցնենք . երթանք աղաչենք մեր մօրը որ մեզի խմոր պատրաստելու կերպը սորվեցնէ» :

Մարիամ և Աննիձա պատմեցին իրենց մօրը թէ որչափ դժուարութիւն կրեցին խմորը պատրաստելու և անոնց մայրն իսկոյն գաւաթ մը լեցուն խմոր պատրաստելով անոնց տուաւ : Կարապետ շատ պատկերներ ունէր : Տղայք բոլոր այն պատկերները գիրքին մէջ փակցուցին : Արդարեւ զարմանալի էր տեսնել թէ այն պատկերներուն յարմար որչափ խօսքեր գտան Սուրբ գիրքէն, և ամէն մէկ պատկերին տակը կամ քովը գրեցին :

Պատկերին մէջ կը տեսնէք այս տղայք և անոնց պատկերը գիրքը :



ՏՂԱՅՔ ԳՐԲԵՆ ՄԵՅՈ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՒՆ ԿԸ ՆԱՅԻՆ

ՔՐԻՍՏՈՍ ԿՐՆԱՅ ԲԱՆԱԼ
ԿՈՒՐԱՅ ԱԶԳԵՐԸ

Սուրբ Աւետարաններուն մէջ կը պատմուի թէ երբ Քրիստոս աշխարհի վրայ էր, շատ հիւանդներ անոր կ'երթային և Քրիստոս զանոնք կը բժշկէր: Կոյրերն անոր մօտենալով, Տէ՛ր, բաց մեր աչուքները կ'ըսէին, և Քրիստոս անոնց աչուքները կը բանար:

Քրիստոս, երբ աշխարհիս վրայ էր, իրեն գացողներէն ոչ զոք մերժեց, հիմա ալ կը հրաւիրէ բոլոր նեղեալները և ցաւագարները յայտնել անոր իրենց նեղութիւններն ու ցաւերը: Քրիստոս կամ կը բժշկէ զանոնք, և կամ համբերութիւն կուտայ անոնց իրենց նեղութիւնները և ցաւերը սանելու:

Քրիստոս ի՛նչպէս բացաւ կոյրերուն աչուքները: Անոնց աչուքներուն գըլպէրով միայն. Ձեր աչուքները բացուին ըսաւ, և բացուեցան:

Ի՛նչ զարմանալի էակ է այն որ միայն խօսքով կրնայ կոյրերուն աչուքները բանալ: Ինչպէս որ ՚ի սկըզբան Աստուած «Լոյս ըլլայ», ըսաւ, և լոյս եղաւ, այսպէս Քրիստոսի մէկ խօսքովը լոյս եկաւ կոյրերուն աչուքներուն:

Մեզքը մտաց և սրտի աչուքները կը կուրացնէ: Այս լրագիրը կարգացող տղոց աչուքները մեզոք կուրացած չէ՛ն: Եթէ անոնց սրտի և մտաց աչուքները մեզոք կուրացած են, Քրիստոսի դիմելու են, վասն զի Քրիստոս կոյրերուն տեսութիւն տալու եկաւ, և «Իշխանութիւն ունի երկրի վրայ մեզքերու թողութիւն տալու»: Քրիստոս պիտի ըսէ ձեռնէ ամէն մէկուն. «Աչուքներդ բացուին», և, «Բաւ մեղքերդ քեզի ներուած են», և ան ատեն լոյս պիտի ծագի ձեր մտաց մէջ, և ձեր սիրտերը պիտի լեցուին անոր սիրոյն խնդութեամբ:

Հին ԱՏԵՆՆԵՐԸ ՏՂԱՅՔ




ՄԱՏԵՆԻԿ ՄԵՐ

Իբր հազար ութ հարիւր տարի առաջ Յունաստանի մէջ ապրող այս տղոց պատկերներն առնուած են այն ատեն նկարուած պատկերներէն, և այն պատկերներուն ճիշդ նման են: Անտեն մարք սովոր էին երկայն կտաւով մը պատատել իրենց մանկիկներն, այնպէս որ անոնց երեսները միայն կը տեսնուէին:

Մարք ամէն օր կը լուանային իրենց մանկիկները: Ամանը որուն մէջ փոքր տղայք կը լուացուէին՝ երբեմն նաեւ իբր որորան կը գործածուէր: Արդարեւ զարմանալի որորան էր այն ամանը: Եթէ կակուզ բարձր մը գրուէր անոր մէջ, տղայք շատ հանդարտ կրնային պառկել հոն:



ՄԱՆ ԱՆ ԿՈՍՑՈՒՄԸ




ՏՂԱՆ ԵՐ ՓՈՔԻ ԵՂԱՅՑԵՐ ԿԸ ՂԱՅՑԵՆ

անէն ալ Յունաստանի մէջ տղայք կը սիրէին դիմակ գնելով իրենց փոքր եղբայրները վախցնել:

Հազար ութ հարիւր տարի առաջ ալ Յունաստանի մէջ տղայք դպրոց կ'երթային, ինչպէս հիմա այս երկրին մէջ կ'երթան: Անտեն ալ Յունաստանի մէջ կային շատ իմաստուն մարդիկ որոնց գիրքերը մինչեւ ցարդ ուշադրութեամբ կը կարգացուին: Բայց անտանտղայք ձեր այժմու գիրքերուն պէս գիրքեր չէին գործածեր: Անոնց գիրքերէն օճանք մեղրամոմով ձեւաւորուած էր:



ԳՐՈՑԻ ՄԵՋ ՏՂԱՅ ՄԸ




ՉԱՐՄԱՆԱԼԻ ԳՐՔԵՐ

փուած տախտակներ էին որոնց վրայ գիրքեր կը գրուէին: Գրել սորվելու համար ալ տղայք այնպիսի տախտակներ վը գործածէին: Անոնց գրիչները փոքրիկ սրածայր գաւազաններ էին, անոնցմով կը գրէին տղայք մեղրամոմի վրայ: Տղոց շքերը զօրացնելու համար անտան գպրոցաց մէջ նաեւ մարմնամարզութիւնդ ս'ը սորուէր: Մարմնամարզութիւն ընէին ետքը տղայք կը քրտնէին, որպէս թէ տաք բաղնիքէ ելած էին, և իրենց քրտինքը պաղեցնելու համար սիւսածանելոյ փաթթուելով քիչ մը ատեն հանդարտ կը



ՄԱՐՄՆԱՄԱՐԶՈՒԹԵՆ ԵՏՔԸ ՏԸՂԱՆԸ ՆԱԳՈՒՍԸ

կենային: Հին ատենները յանցաւոր տղայք պատժելն ալ սրուեաւ էր, և ինչպէս պատկերէն կը տեսնուի, պատժ կրող տղայք մեծ տաղնայ կը կրէին:



ՄԵԾ ՏԱԳՆԱԳ ԿԸ ԿՐԻՏՆ

ՍՈՒՐԲ ԳԻՐԻ ԿԱՐԴԱՅՈՂ ՓՈՔԻ
ՏՂԱՅ ՀԱՄԱՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ժամանակաւ թագաւոր մը փոքր բանակաւ պատերազմի ելաւ մեծ բանակի մը դէմ որ երեք մեծ ազգաց զորքէն բաղկացեալ էր: Այն թագաւորն և անոր բանակը ժամանակ մը ծով պահէլէ և աղօթք ընելէ ետքը մեծ վատահալածամբ և ուրախութեամբ քալեցին թշնամոյն վրայ: Ճամբան դօհու թեան և ցնծութեան երգեր կ'երգէին:

Երբ հասան աշտարակ մը ուստի կրնային դիտել թշնամոյն զօրքը, իրենց չորս դին նայելով անտան որ պատերազմը լնցած էր, և պատերազմի դաշտը լեցուած էր դիակներով: Երբ պատերազմի դաշտը հասան, անտան որ թշնամեաց դիակներով պատուական բաներով զարդարուած էին, և այնչափ շատ բան կար կողպակու որ երեք օր կողպուտ հաւաքեցին:

Ա՛յլ էր այս թագաւորը, և ո՞ր բանակն էր անոր բանակը: Որո՞նք էին երեք ազգերն որ պատերազմի եկան այն թագաւորին դէմ: Այս պատմութիւնը Սուրբ գրոց ո՞ր մասին մէջ կը գտնուի:

ԱՆՅԵԱԼ ԱՄՍՈՑ ՀԱՆԵԼՈՒԿԻՆ ՊԱՏԱՍԽԱՆ
ՄԵԼԵԻՍԵՂԵԿ

- | | |
|------------|-------------|
| 1. Մ ատիա | 6. Ս ամարիա |
| 2. Ե սթեր | 7. Ե դոմ |
| 3. Լ աբան | 8. Դ աւիթ |
| 4. Ք ամ | 9. Ե զրաս |
| 5. Ի սահակ | 10. Կ այեհ |

Ամերիկայի միսիսնարոց ընկերութեան կողմէն
Իմբազիր Ճ. Ք. ԿՐԻՆ
Ֆիլաճանքը բողոքու, Ամերիկան իսն

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
ՏՂԱԳՐՈՒԹԻՒՆ Ա. ՅԱԿՈՒ ՊՅՅԱՅՆՆ